

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1699-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ» (ԱՏԳ ԱԱ)
ԴԱՍԱԿԱՐԳՉԻ 2204, 2205, 2206 00, 2207 ԵՎ 2208 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կանոններով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների (այսուհետ՝ ակոհոլային արտադրանք) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի (այսուհետ՝ հիմնական մոդել) համաձայն դրոշմավորման հետ կապված հարաբերությունները: Ընդ որում՝

1) ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրին դասվող՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող էթիլային սպիրտի վրա նույնականացման միջոցների առկայությունը պարտադիր է, եթե այդ ապրանքներն արտադրողի կամ ներմուծողի կամ այլ կերպ տարայավորողի կողմից տարայավորված են մինչև 5 լիտր տարողությամբ տարաներով.

2) ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2208 ծածկագրերին դասվող՝ մինչև 0.05 լիտր տարողությամբ տարաներով տարայավորված խմիչքները, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող սպիրտային խմիչքները ենթակա չեն նույնականացման միջոցներով դրոշմավորման:

2. Ավտոհոլային արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման թվային նույնականացման միջոցը ներառում է դրոշմավորման ծածկագիր՝ բաղկացած տվյալների 3 խմբից, որոնցից առաջինն ու երկրորդը ձևավորում են ավտոհոլային արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման նույնականացման ծածկագիրը, իսկ երրորդ խումբը՝ ստուգման ծածկագիրը: Ընդ որում՝

1) առաջին խումբը բաղկացած է 14 թվանշանից (առևտրային միավորի գլոբալ նույնականացման համարը (GTIN) և ներառում է ապրանքի ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (01), որը գեներացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված ազգային օպերատորի (այսուհետ՝ օպերատոր) կողմից՝ հիմնվելով տնտեսավարողի՝ ավտոհոլային արտադրանքի վերաբերյալ տրամադրած տեղեկատվության վրա.

2) երկրորդ խումբը բաղկացած է 7 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%"&'()*+,-./_::=<>?) և ներառում է ավտոհոլային արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման անհատական սերիական համարը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (21), որը գեներացվում է օպերատորի կամ տնտեսավարողի կողմից (տվյալների այս խմբի եզրափակիչ նիշը հանդիսանում է նիշ-բաժանարարը, որն ունի «29» ծածկագիրը ASCII նիշերի աղյուսակում).

3) երրորդ խումբը բաղկացած է 4 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%"&'()*+,-./_::=<>?) և ներառում է ստուգման ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (93) և որը գեներացվում է օպերատորի կողմից:

3. Ավտոհոլային արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման նույնականացման միջոցները տրամադրվում են երկչափ շտրիխ ծածկագրի տեսքով՝ GS1 DataMatrix ձևաչափով:

4. Ավտոհոլային արտադրանքի խմբային փաթեթավորման նույնականացման միջոցը ներառում է դրոշմավորման ծածկագիր, որն իր մեջ ներառում է տվյալների 3 խումբ, որոնցից առաջինն ու երկրորդը ձևավորում են ավտոհոլային արտադրանքի խմբային փաթեթավորման նույնականացման ծածկագիրը, իսկ երրորդ խումբը՝ ստուգման ծածկագիրը, ընդ որում՝

1) առաջին խումբը բաղկացած է 14 թվանշանից (առևտրային միավորի գլոբալ նույնականացման համարը (GTIN) և ներառում է ապրանքի ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (01), որը գեներացվում է օպերատորի կողմից՝ հիմնվելով ակոհոլային արտադրանքի շրջանառության մասնակցի տրամադրած տեղեկատվության վրա.

2) երկրորդ խումբը բաղկացած է 13 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()*+,-./_::=<>?) և ներառում է ակոհոլային արտադրանքի խմբային փաթեթավորման անհատական սերիական համարը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (21), որը գեներացվում է օպերատորի կամ տնտեսավարողի կողմից (տվյալների այս խմբի եզրափակիչ նիշը հանդիսանում է նիշ-բաժանարարը, որն ունի «29» ծածկագիրը ASCII նիշերի աղյուսակում).

3) երրորդ խումբը բաղկացած է 4 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()*+,-./_::=<>?) և ներառում է ստուգման ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (93) և որը գեներացվում է օպերատորի կողմից:

5. Ակոհոլային արտադրանքի խմբային փաթեթավորման նույնականացման միջոցները տրամադրվում են GSI DataMatrix երկչափ շտրիխ ծածկագրի ձևաչափով:

6. Նույնականացման միջոցը անհատական (սպառողական) փաթեթավորման, խմբային փաթեթավորման, պիտակի, կաչուն պիտակի վրա փակցվում է այնպիսի մեթոդով, որը թույլ չի տալիս նույնականացման միջոցն առանձնացնել ակոհոլային արտադրանքի փաթեթավորումից:

7. Անհատական (սպառողական) փաթեթավորման վրա նույնականացման միջոցը փակցվում է ոչ պակաս, քան 14x14 միլիմետր չափով, այն կարող է փակցվել փաթեթավորման ցանկացած հատվածի վրա, բացառությամբ ստորին հատվածի:

8. Խմբային և տրանսպորտային փաթեթավորման վրա նույնականացման միջոցը փակցվում է փաթեթավորման դիմային կամ կողային հատվածի վրա և պետք է ունենա այնպիսի չափս, որ ապահովի ազրեգացման ընթացակարգերի կատարման հարմարավետությունը:

9. Անհատական (սպառողական) փաթեթավորման, խմբային փաթեթավորման, պիտակի, կաչուն պիտակի վրա փակցվող նույնականացման միջոցը չպետք է տպագրվի փաթեթավորման թափանցիկ թաղանթի վրա կամ մեկ այլ արտաքին փաթեթավորման նյութի վրա: Պիտակի վրա չպետք է լինի մեկ այլ տեղեկատվություն, որը կխոչընդոտի նույնականացման միջոցի ընթերցմանը: Նույնականացման միջոցը պետք է տեղադրվի այնպես, որ չխախտվի ակոհոլային արտադրանքի փաթեթավորման վրա տպված տեղեկատվության ամբողջականությունը տեխնիկական կանոնակարգման ոլորտի նորմատիվային փաստաթղթերի պահանջների համաձայն:

10. Ակոհոլային արտադրանքի վրա պիտակների և կաչուն պիտակների կիրառման համար ներկայացվում են հետևյալ պահանջները՝

1) ակոհոլային արտադրանքի վրա պիտակներ կամ կաչուն պիտակներ փակցնելու համար պետք է կիրառվի այնպիսի տեխնոլոգիա, որը կապահովի պիտակի վրա տպված նույնականացման միջոցների ընթերցումը պիտակի կիրառման պահից մինչև ակոհոլային արտադրանքը սպառողին վաճառելու պահը.

2) պիտակները կամ կաչուն պիտակները փակցվում են անմիջապես ակոհոլային արտադրանքի փաթեթավորման վրա՝ սոսնձման եղանակով.

3) չի թույլատրվում պիտակի կամ կաչուն պիտակի վրա ակոհոլային արտադրանքի փաթեթավորման որևէ այլ տարրեր փակցնել, որոնք ծածկում են պիտակի կամ կաչուն պիտակի մակերեսը և դժվարացնում են նույնականացման միջոցի ընթերցումը.

4) նույնականացման միջոցների չափը և տեղակայումը պետք է ապահովի դրոշմավորման ծածկագրերի ճիշտ ընթերցումն ու ճանաչումը, ներառյալ տվյալների հավաքագրման տերմինալների, հատուկ (բջջային) հավելվածների, լազերային տեսաձրիչների միջոցով՝ ISO/IEC 15415 ստանդարտի (ISO/IEC 15415:2011 «Տեղեկատվական տեխնոլոգիա. ավտոմատացված նույնականացման և տվյալների հավաքագրման տեխնիկաներ՝ շտրիխ ծածկագրի տպման որակի թեստավորման տեխնիկական հատկորոշիչը՝ երկչափ սիշեր») համաձայն:

11. ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների արտադրանքի փաթեթավորման տարբեր ձևերից, նյութերի գործոններից,

արտադրանքի արտադրական ցիկլից, ինչպես նաև արտադրության սերիականությունից ելնելով՝ հնարավոր են ապրանքների/փաթեթների դրոշմավորման հետևյալ տարբերակները՝

1) ծածկագրերի տպագրում տպարանում, որտեղ շրջանառության մասնակիցը պատվիրում է փաթեթավորում (այսինքն՝ փաթեթավորման վրա նույնականացման միջոցների կիրառումը կատարվում է ծառայություն մատուցողների կողմից ապրանքների շրջանառության մասնակցի պատվերով)։

2) պիտակավորում (արտադրանքի վրա պիտակների սոսնձում)։

3) նույնականացման միջոցների անմիջական կիրառում արտադրանքի փաթեթավորման վրա գործարանում հոսքագծի վրա։

12. Ալկոհոլային արտադրանք արտադրողը պատվիրում է դրոշմավորման ծածկագրեր համակարգում, փոխանցում է դրոշմավորման ծածկագրերը տպարան և պատվիրում է փաթեթավորման արտադրություն արդեն փակցված նույնականացման միջոցներով, այնուհետև ստանում է արդեն դրոշմավորված փաթեթավորումը։ Պիտակավորման այս մեթոդն օգտագործելիս ալկոհոլային արտադրանքի շրջանառության մասնակիցը պետք է ձեռք բերի 2d տեսածրիչ կամ տվյալների հավաքագրման տերմինալ (S<S)՝ դրոշմավորված արտադրանքի հետ աշխատելու համար։ Միաժամանակ, այս դեպքում տպարանը պետք է հազեցած լինի դրոշմավորման ծածկագրերով աշխատելու համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով (ծրագրային ապահովում՝ դրոշմավորման ծածկագիր ստանալու և փոխակերպելու նույնականացման միջոցների տպագրման և ստուգման սարքավորումներ)։

13. Ապրանքների փաթեթավորման վրա պիտակների սոսնձումը կարող է իրականացվել ապրանքների շրջանառության մասնակցի կողմից ձեռքով կամ պիտակի կիրառիչի միջոցով։ Առաջին դեպքում պիտակները տպվում են ջերմային փոխանցման տպիչի վրա, այնուհետև կազմակերպության աշխատակիցները փակցնում են դրանք ապրանքների վրա։ Երկրորդ դեպքում տեղադրվում է պիտակի կիրառիչ, որը նախ նույնականացման միջոցը փակցնում է կպչուն պիտակի վրա, իսկ հետո կպչուն պիտակը սոսնձում է ապրանքի վրա։ Դրոշմավորման այս մեթոդը կիրառելիս շրջանառության մասնակցին անհրաժեշտ կլինի սարքավորումների և նյութերի հետևյալ նվազագույն հավաքածուն՝

- 1) անհատական կամ դյուրակիր համակարգիչ.
- 2) պիտակի տպիչ.
- 3) ինքնաստանձվող պիտակներ.
- 4) ջերմափոխանցող ժապավեններ:

14. Արտադրողը կարող է ինքնուրույն փակցնել նույնականացման միջոցները ակոնոլային արտադրանքի վրա, որոնք պարունակում են համակարգում ստացված դրոշմավորման ծածկագրեր: Միաժամանակ, վերջինս պետք է ձեռք բերի մասնագիտացված սարքավորումներ կամ հարմարեցնի գոյություն ունեցող սարքավորումները և կարգավորի իր բիզնես գործընթացները դրոշմավորման և հետագծելիության գործընթացների հետ աշխատելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ